

Իսաղ թվանշաններով

Ժամանակի սահմանափակում՝ 0.3 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 128 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Արամը կարողանում է հեռախոսների համար ծրագիր գրել: Արամը գրել է ծրագիր, որը էկրանին գեներացնում է թվանշանների հաջորդականություն: Հետո կարելի է մատով հպվել ցանկացած թվանշանի: Այդ դեպքում Արամի ծրագիրը ջնջում է այդ թվանշանը, իսկ հետո այդ տեղից աջ գտնվող թվանշանները տեղաշարժում է դեպի ձախ այնպես, որ դատարկ տեղ չմնա:

Հիմա Արամը մտածում է հետևյալ խնդրի շուրջը: Եթե պետք է հեռացնել k թվանշան, ապա առավելագույնը ինչ թիվ կարելի է ստանալ: Օգնեք Արամին, գրեք ծրագիր, որը լուծում է այդ խնդիրը:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է գեներացված թիվը: Թվանշանների n քանակը չի գերազանցում 500000 -ը: Առաջին թվանշանը զրո չէ: Երկրորդ տողում տրված է k ($k < n$) թիվը:

Ելքային տվյալներ

Պետք է արտադել մեկ թիվ՝ մեծագույն թիվը, որը հնարավոր է ստանալ k հատ թվանշան հեռացնելուց հետո:

Օրինակ

Մուտք	Ելք
2018 2	28
127127 3	727